ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2023 թվական N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 29-ի «Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման չորրորդ միջոցառման մասին» N 205-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի աղյուսակում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 45-րդ կետ.

«	45	Թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրումների իրականացում » ,

2) որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 2-րդ կետում՝

ա. 2-րդ ենթակետում «N 1 հավելվածով սահմանված ոլորտներում» բառերը փոխարինել «N 1 հավելվածի աղյուսակի 1-44-րդ կետերում նշված ոլորտներում» բառերով, իսկ «:» կետադրական նշանը՝ «.» կետադրական նշանով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ ենթակետ.

«3) 2023 թվականի մարտի 31-ի դրությամբ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի աղյուսակի 45-րդ կետում նշված ոլորտում փաստացի գործունեություն իրականացնող արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերն ու ֆիզիկական անձինք, ովքեր 2023 թվականի ապրիլի 1-ին նախորդող առնվազն 15

օրերին չեն հանդիսացել աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողներ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Որոշմամբ հաստատված N 1 հավելվածի աղյուսակի 45-րդ կետում նշված ոլորտում փաստացի գործունեություն իրականացնող և որոշմամբ հաստատված N 2 և (կամ) N 3 հավելվածների պահանջները բավարարող շահառուները որոշմամբ հաստատված N 2 և (կամ) N 3 հավելվածների՝ համապատասխանաբար 11-րդ և 7-րդ կետերով սահմանված դիմումները հարկային մարմին են ներկայացնում մինչև 2023 թվականի մայիսի 15-ը ներառյալ:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**